ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1949 *Общественные науки*

Վ. Պարսամյան

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ[1]

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ— պրոլետարական ռևոլուցիաների դարագլուխը։

Պատմությանը հայտնի բոլոր ռևոլուցիաներից այդ ամենամեծ ռևոլուցիան՝ խորտակելով իմպերիալիզմի շղթաները, աշխարհի մեկ վեցերորդ մասում սովետական կարգեր հաստատեց, որը և հանդիսացավ հին աշխարհից— նոր աշխարհի, կապիտալիստական հասարակարգից— կոմունիստական հասարակարգի անցման համաշխարհային պատմական նշանակություն ունեցող շրջադարձի սկիզբը։ Ստրուկների ռևոլուցիան, ինչպես ընկեր Ստալինը ցույց տվեց, խորտակեց ստրկատիրական կարգերը, ճորտերի ռևոլուցիան՝ ճորտատիրական-ֆեոդալական կարգերը, բայց նրանցից և ոչ մեկը չվերացրեց շահագործումը։ Փոխվեցին միայն շահագործման ձևերը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան, որպես նոր տիպի ռևոլուցիա, ոչ միայն խորտակեց կապիտալիստական կարգերը Ռուսաստանում, այլև սկիզբ դրեց կապիտալիզմի և ընդհանրապես շահագործման վերացմանը ամբողջ աշխարհում։

Ընկեր Ստալինը, խոսելով Հոկտեմբերյան ռևոլուցիայի միջազգային նշանակության մասին, ասում է. «Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակը արմատական բեկում է նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատագրի մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատագրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի եղանակների և կազմակերպման ձևերի մեջ, կենցաղի և տրադիցիաների մեջ, կուլտուրայի և իդեոլոգիայի մեջ»։[2]

Հոկտեմբերյան ռևոլուցիան արմատական բեկում ստեղծեց նաև Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ։

Հայտնի է, որ մինչև Ռուսաստանին միանալը, Անդրկովկասի ժողովուրդները մի քանի դար շարունակ գտնվում էին հետամնաց Պարսկաստանի և Թուրքիայի ծանր լծի տակ։ «Պարսկական և թուրքական ասիմիլատորները, ինչպես ընկեր Ստալինն է ասում «Ազգային հարցը և լենինիզմը» իր նշանա-

---

[1] *Զեկուցված է 1949 թ. դեկտեմբերի 23-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովում, նվիրված Ի. Վ. Ստալինի ծննդյան 70-ամյակին։*

[2] *Ի. Ստալին, Երկեր, հատ. 10, էջ 272։*

վոր աշխատության մեջ, հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին»։[1]

Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելով թուրքական ու պարսկական կործանարար լծից և կանգնելով զարգացման մի նոր, համեմատաբար ավելի պրոգրեսիվ ուղու վրա, Անդրկովկասի ժողովուրդները ավելի քան մի դար ընկան ցարիզմի ազգային-գաղութային ճնշման տակ։ Ցարիզմի անկումը և փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի հաղթանակը նույնպես ազատություն չբերեց և չէր էլ կարող բերել, Անդրկովկասի ժողովուրդներին։ «Ազգային ճնշման հին կոպիտ ձևը, ինչպես ընկեր Ստալինն է ասում, փոխարինվեց ճնշման նոր, նրբացած, բայց դրա փոխարեն ավելի վտանգավոր ձևով»։[2]

Եվ այսպես, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան ռևոլուցիան, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական իղձերը մնում էին չիրականացված։

Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակը Ռուսաստանում, Լենինի-Ստալինի ազատարար կոչերը ոտքի հանեցին Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդներին, այդ թվում և Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին։

«Փետրվարյան ռևոլուցիան լական փոփոխություններ չմտցրեց երկրամասի (Անդրկովկասի— Վ. Պ.) աշխատավոր դասակարգերի դրության մեջ», ասում է ընկեր Ստալինը։

Հոկտեմբերյան ռևոլուցիան սուր կերպով փոխեց դրությունը։ Նա մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին»։[3]

Նույն տարում «Պրավդա»-յում հրատարակված «Հոկտեմբերյան հեղաշրջումը և ազգային հարցը» հոդվածում ընկեր Ստալինը նշում է, որ սոցիալիստական ռևոլուցիան, հաղթելով կենտրոնում, «անխուսափելիորեն պետք է տարածվեր ծայրամասերում։ Եվ իրոք, ռևոլուցիոն ալիքը հյուսիսից հեղաշրջման առաջին իսկ օրերից տարածվեց ամբողջ Ռուսաստանում, ընդգրկելով ծայրամաս ծայրամասի հետևից»։[4]

«Միայն այժմ պարզ դարձավ, ասում է ընկեր Ստալինը, որ ճնշված ազգությունների ազատագրումը անմտածելի է առանց իմպերիալիզմի հետ կապերը խզելու, առանց ճնշվող ազգությունների բուրժուազիային տապալելու, առանց իշխանությունն այդ ազգությունների աշխատավոր մասսաների ձեռքն անցնելու...

Հոկտեմբերյան հեղաշրջումը, վերջ տալով հին, բուրժուա-ազատագրական ազգային շարժմանը, բացեց ճնշված ազգությունների բանվորների ու գյուղացիների նոր, սոցիալիստական շարժման դարագլուխը, այն շարժման, որն ուղղված է ամեն մի,— նշանակում է նաև ազգային— ճնշման դեմ, «իր» և օտար բուրժուազիայի իշխանության դեմ, առհասարակ իմպերիալիզմի դեմ»։[5]

---

1 Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 359։
2 Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 173։
3 Նույն տեղում, էջ 59—60։
4 Նույն տեղում, էջ 178։
5 Նույն տեղում, էջ 181—182։

Անդրկովկասը Ռուսաստանի այն ծայրամասերից էր, որը երկար տարիներ շարունակ տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապերի մեջ էր գտնվում կենտրոնի հետ։ Անդրկովկասի ժողովուրդները վաղուց ի վեր իրենց ազատությունը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ, նրա հետ միասին, ձեռք ձեռքի տված, ազատագրական պայքար էին մղել ցարիզմի և բուրժուազիայի դեմ, անխզելի բարեկամություն հաստատել միմյանց հետ։ Հատկապես ռուսական առաջին և երկրորդ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիաների տարիներին, ընկեր Ստալինի և նրա հիմնադրած ու գլխավորած բոլշևիկյան կազմակերպությունների ջանքերով ավելի քան ամրապնդվել էին Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ինտերնացիոնալ կապերը։

Տնտեսական, քաղաքական ու կուլտուրական այդօրինակ սերտ կապերի առկայությունը մի կողմից, դասակարգային շահերի ընդհանրությունը մյուս կողմից, Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին համախմբում էին սոցիալիստական ռևոլուցիայի դրոշ բարձրացրած ռուսական պրոլետարիատի շուրջը։

Լենինի հռչակավոր ապրիլյան թեզիսներից և պարտիայի VI համագումարից հետո, երբ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից սոցիալիստական ռևոլուցիայի անցնելու, զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու հարցը օրակարգի հարց դարձավ, Անդրկովկասի բոլշևիկները ևս կույս վերցրին դեպի զինված ապստամբությունը։ 1917 թ. հոկտեմբերի 2-ին Թիֆլիսում կայացած Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների համագումարը, պարտիայի VI համագումարի դիրեկտիվների համաձայն, որոշում ընդունեց մոբիլիզացնել բանվորներին ու գյուղացիներին՝ զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու համար։ Պատահական չէ, որ երբ Պետերբուրգում բռնկվեց Հոկտեմբերյան ռևոլուցիան, Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները մեծ խանդավառությամբ այն ընդունեցին որպես իրենց ազատության ղողանջ և պայքարի ելան հանուն սովետական իշխանության։

Բաքվի Սովետը, որի գլուխ կանգնած էր Լենինի և Ստալինի հավատարիմ զինակից, ականավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանը, Հոկտեմբերյան ռևոլուցիայի հենց երկրորդ օրը՝ 1917 թ. հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) ճանաչեց Սովետական իշխանությունը, իսկ հոկտեմբերի 31-ին որոշում ընդունեց Բաքվում իշխանությունն ամբողջովին բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետին անցնելու մասին։[1] Ողջունելով ռևոլուցիայի մեծ առաջնորդ Լենինի գլխավորությամբ Ռուսաստանում ստեղծված Սովետական կառավարությանը, Բաքվի Սովետը իր կոչի մեջ գրում է.

«Կեցցե՛ Պետերբուրգի ռևոլուցիոն պրոլետարիատը և կայազորը։ Կեցցե՛ ռևոլուցիոն նոր կառավարությունը Լենինի գլխավորությամբ։

Կեցցե՛ Սովետների իշխանությունը»։[2]

1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսում գումարված Կովկասյան բանակի երկրային 2-րդ համագումարը, ընդունելով բոլշևիկների բանաձևը, մերժում է Անդրկովկասյան Կոմիսարիատի կոնտրռևոլուցիոն իշխանությունը և փոխա-

[1] Տես Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 137—139, Երևան, 1944 թ.։

[2] Տես Ստ. Շահումյան, Ընտիր երկեր (1902—1918), էջ 500, Երևան, 1948 թ.։

բենը ճանաչում Ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանություն։ Համագումարը ողջույն է ուղարկում Լենինին։ Ընտրում է Երկրային նոր Սովետ՝ բոլշևիկ Կորգանովի նախագահությամբ և ավարտում է իր աշխատանքները ինտերնացիոնալ երգելով, «Կորչի Անդրկովկասյան Կոմիսարիատը», «Կեցցե Ժողովրդական Կոմիսարների Սովետը» լոզունգներով։

Նման բանաձև է ընդունում նաև Թիֆլիսում գումարված Կովկասի 15 բանվորական Սովետների համագումարը։

Պետերբուրգի և Մոսկվայի պրոլետարիատի օրինակով Սովետական իշխանության համար պայքարի են ելնում ողջ Անդրկովկասի բանվորները, զինվորներն ու հողի ծարավ գյուղացիները։ Սովետական կառավարության առաջին դեկրետները խաղաղության ու հողի մասին, Լենինի և Ստալինի ստորագրությամբ հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» արթնացնում և ոտքի են հանում Անդրկովկասի դարերով ճնշված աշխատավորությանը։

Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո և նրա անմիջական ազդեցության տակ, դասակարգային պայքարն Անդրկովկասում մտնում է նոր փուլի մեջ։ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների պատմական պայքարը շահագործող դասակարգերի դեմ, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, վեր է ածվում բուրժուա-կալվածատիրական կարգերը տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու համար մղվող պայքարի։ 1918 թ. Լենինին գրած մի նամակում, Ստ. Շահումյանը հենց այդպես էլ գնահատում է հետհոկտեմբերյան շրջանում Անդրկովկասում ստեղծված քաղաքական կացությունը. «Անդրկովկասը,— ասում է նա,— մտել է ակտիվ զինված պայքարի շրջան՝ Սովետական իշխանության համար»։[1]

Սովետական իշխանության համար ոտքի ելած Անդրկովկասի բանվորների, զինվորների ու գյուղացիների ռևոլուցիոն պայքարը հանդիպեց ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերի կատաղի դիմադրությանը։ Ցանկանալով կանգնեցնել Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթական երթը, Անդրկովկասը հեռու պահել ռևոլուցիայից և այն դարձնել կոնտրռևոլուցիայի բազա, նրանք կոնսոլիդացիայի ենթարկեցին իրենց ուժերը և կոալիցիա կազմեցին Սովետական իշխանության դեմ։

«Անդրկովկասի ունևոր դասակարգերը ակնբախ տեսան,— ասում է ընկեր Ստալինը,— որ Հոկտեմբերյան ռևոլուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց։ Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի ու մա՞վան հարց։ Իսկ «սոցիալիստական» էսեռա-մենշևիկյան ինտելիգենցիան, որն արդեն ճաշակել էր իշխանության իմայության ծառից և դրված է այժմ այդ իշխանությունը կորցնելու հեռանկարի առաջ, ավտոմատորեն դաշինքի մեջ մտավ ունևոր դասակարգերի հետ։

Այսպես ստեղծվեց հակասովետական կոալիցիան Անդրկովկասում»։[2]

Դասակարգային սուր պայքարի, ռևոլուցիայի ու կոնտրռևոլուցիայի ուժերի փախման այսօրինակ փարդ իրադրության պայմաններում էր, ահա, որ Լենինը և Ստալինը ձեռնամուխ էին եղել Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության, Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու գործին։

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 305։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60։

Սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում, Լենինը և Ստալինը կապում էին Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակի ամրապնդման ընդհանուր գործի հետ։ Այդ պատճառով էլ, կենտրոնում իշխանությունը գրավելուց անմիջապես հետո, նրանք գործնական քայլերի դիմեցին Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու համար։

1917 թ. դեկտեմբերի 16-ին ընկեր Ստալինը Ժողկոմսովետի նիստում հատուկ զեկուցում է տալիս Կովկասի դրության մասին։ Ընկեր Ստալինի առաջարկությամբ Ժողկոմսովետը որոշում է Բաքվի բանվորների և զինվորների Սովետի նախագահ, Բոլշևիկյան Պարտիայի Կենտկոմի անդամ Ստեփան Շահումյանին նշանակել Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար և Բաքվի Սովետին բաց թողնել 500 հազար ռուբլի։ Դեկտեմբերի 18-ին Ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինը և Ազգությունների Գործերի Ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստալինը ստորագրում են Ստ. Շահումյանի մանդատը, որը դրամի հետ Անդրկովկաս է բերում և Շահումյանին հանձնում ռևոլուցիոն հերոս Կամոն։

Սովետական կառավարության առաջին կարևոր ձեռնարկումներից էր նաև «Թուրքահայաստանի» մասին դեկրետի հրատարակումը։ Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ և նրա կազմած նախագծի հիման վրա, 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողկոմսովետը հատուկ դեկրետ ի հրատարակում, որով «Թուրքահայաստանին» ազատ ինքնորոշման իրավունք էր տրվում։ Այդ դեկրետը, ինչպես և 1917 թ. դեկտեմբերի 31-ի «Պրավդա»-ում տպագրված ընկեր Ստալինի հոդվածը «Թուրքահայաստանի» մասին, բացառիկ կարևոր նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար։ Այն ժամանակ, երբ հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, առաջին հերթին կոնտրռևոլուցիոն դաշնակները, սարսափած Հոկտեմբերյան ռևոլուցիայից, աշխատում էին Հայաստանը կըտրել Սովետական Ռուսաստանից և արևմտա-եվրոպական իմպերիալիզմի գաղութ դարձնել այն, այդ վճռական պահին, ընկեր Ստալինը նշում էր հայ ժողովրդի ազատագրության իսկական ուղին։

«Այսպես կոչված «Թուրքահայաստանը» միակ երկիրն է, կարծեմ,— ասում է ընկեր Ստալինը,— որ Ռուսաստանը գրավել է «պատերազմի իրավունքով»։ Այդ այն «դրախտային անկյունն» է, որը երկար տարիներ Արևմուտքի ագահ դիվանագիտական իղձերի և Արևելքի արյունոտ վարչական մարզանքների առարկա է ծառայել (և շարունակում է ծառայել)։ Հայերի ջարդեր ու կոտորած, մի կողմից, բոլոր երկրների դիվանագետների փարիսեցիական «պաշտպանություն», որպես նոր կոտորածի քողարկում, մյուս կողմից, իսկ դրա հետևանքով արյունաշաղախ, խաբված ու ստրկացված Հայաստան,— ո՞ւմ ծանոթ չեն «քաղաքակիրթ» տերությունների դիվանագիտական «հերոսությունների» այդ «սովորական» պատկերները։

Հայաստանի զավակները, իրենց հայրենիքի հերոս պաշտպանները, բայց բնավ ոչ-հեռատես քաղաքագետները, որոնք շատ անգամ են խաբվել իմպերիալիստական դիվանագիտության գիշատիչների կողմից,— չեն կարող այժմ չտեսնել, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ։ Պարզ է դառնում, որ ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլուցիայի միջով։ Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռու-

սաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ»։[1]

Լենինի-Ստալինի այս և նմանօրինակ ձեռնարկումներն ու ցուցումները նոր լիցք էին տալիս Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռևոլուցիոն պայքարին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակն Անդրկովկասում ապահովելու, աշխատավորական մասսաներին բոլշևիկների պարտիայի շուրջը համախմբելու գործում բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ նաև այն պայքարը, որն ընկեր Սաալինը մղեց սոցիալիզմի դիմակի տակ թաքնված Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներների դեմ։

1918 թ. մարտի 26-ին և 27-ին «Պրավդա»-ում տպագրվում է ընկեր Ստալինի «Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» նշանավոր հոդվածը։ Այդ հոդվածում ընկեր Ստալինը դիմակազերծ է անում Անդրկովկասյան Կոմիսարիատում և Սեյմում նստած մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների կեղծ ռևոլուցիոն, «սոցիալիստական» դեմքը, մերկացնում է նրանց կոնտրռևոլուցիոն, դավաճանական դերը։

«Անդրկովկասյան կոմիսարիատը իր թաթար բեկերով, ինչպես Խանխոյսկին և Խասմամեդովը, մի կողմից, և վրացի ազնվական ինտելիգենտներով, ինչպես Ժորդանիան և Գեգեչկորին— մյուս կողմից, այդ հակասովետական կոալիցիայի կենդանի մարմնացումն է։

Դասակարգերի կոալիցիայի համար ազգային խմբերի ներսում կազմակերպվում են «ազգային խորհուրդներ»— վրացական, թաթարական, հայկական։ Նրանց ոգեշնչողը մենշևիկ Ժորդանիան է։

Անդրկովկասի բոլոր գլխավոր ազգությունների ունևոր խավերի կոալիցիայի համար ստեղծվում է Անդրկովկասյան Կոմիսարիատը։ Նրա ղեկավարը մենշևիկ Գեգեչկորին է։

Երկրամասի «ամբողջ բնակչությունը» Սովետական իշխանության դեմ մղելիք պայքարում միավորելու համար կազմակերպվում է այսպես կոչված «Անդրկովկասյան սեյմը», որ կազմված է Սահմանադիր ժողովի Անդրկովկասից ընտրված էսեռա-մենշևիկա-դաշնակա-խանական անդամներից։ Նրա դեկորացիան, այն է՝ նախագահը մենշևիկ Չխեիձեն է։

Այստեղ կա և «սոցիալիզմ» և «ազգային ինքնորոշում», և դեռ ինչ որ ավելի ռեալ բան, քան այդ հին պաճուճանքները, այն է՝ ունևոր խավերի ռեալ կաշինք բանվորա-գյուղացիական իշխանության դեմ...

«Հանձին Անդրկովկասյան կոմիսարիատի և նրա «սեյմական-ազգային» հավելուկների, մենք գործ ունենք Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռեմ ուղղված ամենաչարանենգ կոնտրռևոլուցիոն բլոկի հետ»։

Ընկեր Ստալինը ամենայն ճշտությամբ գծում է Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դասակարգային ուժերի նոր փոխհարաբերությունների պատկերը, նշում է բանվորա-գյուղացիական ռևոլուցիոն շարժումների աշխուժացման փաստը։

«Հյուսիսից եկող և բանվորներին նորանոր նվաճումներ բերող ռևոլուցիան, բնականաբար, Անդրկովկասյան պրոլետարիատին նոր պայքարի էր

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30—31։
[2] Նույն տեղում, էջ 60--61, 73—74։

բարձրացնում... ռևոլուցիոն պրոլետարական Բաքուն, որ Հոկտեմբերյան ռևոլուցիայի առաջին իսկ օրերից ճանաչել է Սովետական իշխանությունը և անգուլ պայքար է մղում Անդրկովկասյան կոմիսարիատի դեմ, չէր թողնում, որ անդրկովկասյան պրոլետարիատը քնի, նրա համար վարակիչ օրինակ և սոցիալիզմի ուղին լուսավորող կենդանի փարոս էր ծառայում»։[1]

Այդ հոդվածում ընկեր Ստալինը ցույց է տալիս, թե ինչպես Անդրկովկասի գյուղերում արագորեն ծավալվում է ագրարային-գյուղացիական շարժումը։

«Ռազմաճակատից վերադարձած անդրկովկասյան զինվորները տարածեցին գյուղերում ագրարային ռևոլուցիան։ Բոցավառվել սկսեցին մուսուլման ու վրացի կալվածատերերի կալվածատները։ Ճորտատիրական մնացորդների հիմքերը վճռական գրոհի ենթարկվեցին «բոլշևիկացած» զինվոր-գյուղացիների կողմից»։[2]

Եվ այսպես, Հոկտեմբերյան ռևոլուցիայի փոթորկալի օրերին, նրա հաղթական երթի շրջանում, ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, կազմակերպում, պայքարի էր հանում Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին՝ զինված ապստամբության միջոցով Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն իշխանությունը տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու համար։

1917 թվին Անդրկովկասում բոլոր օբեկտիվ պայմանները կային սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի համար։ Բայց, ինչպես հայտնի է, այդ տեղի չունեցավ։ Հանդիպելով ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերի կատաղի դիմադրությանը, սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում ձգձգվեց։ Ռևոլուցիայի հաղթանակի գործին խոշոր չափով վնասեց նաև Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար օրգաններում խցկված օպորտունիստական և դավաճանական տարրերի գործունեությունը։ «Օպորտունիստների Թիֆլիսի ղեկավար խումբը՝ Ֆ. Մախարաձեն, Բ. Մդիվանին, Մ. Ցկուջավան, Մ. Տորոշելիձեն և ուրիշները, ինչպես ընկեր Բերիան է ասում, հակառակ Լենինի-Ստալինի ցուցումների, վճռաբար հրաժարվեց Վրաստանում և Անդրկովկասում իշխանության համար զինված պայքար նախապատրաստելուց և անցկացնելուց, փաստորեն մենշևիկներին հանձնեց Թիֆլիսի զինանոցը, հրաժարվեց զինվորների մեջ ագիտացիա մղել սովետական իշխանության համար և օգտագործել Կովկասյան ճակատի ռևոլուցիոն զինվորներին պայքարելու Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաների (մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների) բլոկի տապալման համար... Այդ ղեկավար խմբի դավաճանական տակտիկայի պատճառով Վրաստանի բոլշևիկները 1917 թվականի վերջերին չկարողացան օգտագործել ռևոլուցիոն նպաստավոր սիտուացիան իշխանությունը գրավելու համար»։[3]

* * *

Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո Անդրկովկասում օր ավուր զարգացող բանվորա-գյուղացիական շարժումները նոր թափ ստացան 1918 թվին։ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և Անդրկովկասի այլ կենտրոններում բան-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 68—69։

[2] Նույն տեղում, էջ 67—68։

[3] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 224—226, Երևան, 1945 թ.։

վորների ու աշխատավորական խավերի մեջ ռևոլուցիոն տրամադրություններ-ը գնալով ավելի աճեցին։ Հատկապես երկաթուղային բանվորների գործադուլային շարժումներն այն աստիճան սուր բնույթ ստացան, որ մենշևիկների պաշտոնական օրգան „Борьба" թերթը գաղտագած պահանջում էր կառավարությունից «գործադուլները ճանաչել միանգամայն անթույլատրելի և ամենախիստ պատժի ենթարկել նրանց ղեկավարներին»։[1]

Անդրկովկասի աշխատավոր գյուղացիության մեջ լայն ծավալ ստացավ ագրարային շարժումը։ Ելիզավետպոլի, Գորիի, Թելավի, Բորչալուի, Լոռու և մի շարք այլ շրջաններում գյուղացիները մասսայորեն բռնագրավում էին կալվածատերերի հողերը, ինքնագատաստանի ենթարկում իրենց խաներին, բեգերին, իշխաններին ու մելիքներին։

1918 թ. հունվարին «Անդրկովկասի մուսուլմանական գավառների գյուղական բնակչությանը» ուղղած իր մի կոչի մեջ, Կովկասի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը խոսելով Ելիզավետպոլի նահանգում բռնկված ագրարային շարժման մասին, ասում է.

«Մուսուլման գյուղացիներ...

Դուք արդեն հունվարի սկզբից ապստամբել եք ձեր բեգերի դեմ և խլում եք նրանց հողերը։

Բանվորա-գյուղացիական կառավարության անունից ես ողջունում եմ ձեր արթնացումը և ձեր պայքարը։ Հողը պետք է պատկանի ժողովրդին... Բանվորա-գյուղացիական նոր կառավարությունը, որ հաստատվել է Պետրոգրադում, ոչ ոքի չի թույլ տա ձեզնից հողերը խլել ու վերականգնել կալվածատերերի ատելի լուծը...։

Գյուղացի եղբայրներ.

Հասել է ժամը, երբ դուք վերջնականապես պետք է թոթափեք ձեր ուսերից կալվածատեր-հողատերերի, խաների, բեգերի, աղալարների և այլոց դարավոր լուծը»։[2]

Ռևոլուցիոն տրամադրությունները համակել էին նաև զինվորներին, որոնք խիստ կերպով դժգոհ էին Անդրկովկասյան Կոմիսարիատի ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն քաղաքականությունից։

Անդրկովկասի բոլշևիկները գլխավորելով բանվորների, գյուղացիների և զինվորների ռևոլուցիոն շարժումները, նրանց՝ առաջնորդում էին դեպի իշխանության գրավումը՝ զինված ապստամբության միջոցով։ «Բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին» ուղղած 1918 թ. իր մի դիմումի մեջ, բոլշևիկյան պարտիայի Անդրկովկասյան Երկրային Կոմիտեն կոչ է անում նրանց ոտքի կանգնել, տապալել կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը։ Դիմումը վերջանում է հետևյալ մարտական խոսքերով. «Լոռի Անդրկովկասյան կոմիսարիատը և բուտաֆորական Սեյմը։ Կեցցեն բանվորների. զինվորների և գյուղացիների դեպուտատական սովետները. ամբողջ իշխանությունը սովետներին»։[3]

1918 թ. հունվարին բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների բոլոր սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին» ուղղված իր դիմումի մեջ Ստ. Շահումյանը կոչ անելով «անհապաղ սո-

[1] „Борьба", 1918 թ., № 41։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 533—534։
[3] „Кавказская Правда", № 1, 1918 թ.։

վետական իշխանություն ստեղծել Կովկասում», գրում է. «Պետական կառավարության հին ձևերը խորտակված են։ Ամբողջ բանվորա-գյուղացիական Ռուսաստանում նոր կյանքի շինարարություն է կատարվում. քաղաքացիական պատերազմի ցավերով ծնվում է նոր, ազատ Ռուսաստանը։ Ոչ թե բուրժուական պառլամենտական ռեսպուբլիկան՝ կապիտալիստների ու կալվածատերերի գլխավորությամբ, ոչ թե Կովկասյան «սեյմը» բեգերի, ազնվականների, բուրժուա-նացիոնալիստական պաշտպանողականների գլխավորությամբ, այլ սովետների բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկան,— ահա, թե ինչը կարող է մեզ փրկել կործանումից...

Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցեք նրան։ Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն»։[1]

Սարսափած վերահաս ռևոլուցիայի վտանգից, Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներներն ավելի ևս խստացնում իրենց ռեպրեսիաները բոլշևիկների դեմ, ռևոլուցիոն բանվորների ու գյուղացիների դեմ։ Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի կարգադրությամբ 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին բանտարկվում են բազմաթիվ բոլշևիկներ, փակվում են „Кавказский рабочий", «Բանվորի կռիվ», «Բրձոլա» բոլշևիկյան թերթերը։ Հունվարի 9—12-ը Շամխոր կայարանի մոտ զինաթափվում և գնդակահարվում են Կովկասյան ֆրոնտից տուն վերադարձող հազարավոր ռուս զինվորներ։ Փետրվարի 10-ին, Անդրկովկասյան Սեյմի բացման օրը, Ժորդանիայի և Գեգեչկորու կարգադրությամբ, գնդակոծվում է Ալեքսանդրյան այգու բոլշևիկյան միտինգը։

Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներները չբավականացան այդօրինակ դաժան ռեպրեսիաներով։ Ցանկանալով ինչ գնով էլ լինի խեղդել ռևոլուցիան, նրանք դիմեցին Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և օտարերկրյա իմպերիալիստների «խնամակալությանը» հանձնելու ստոր դավաճանական քայլին։ Օգտվելով այդ հանգամանքից, թուրքական զավթիչները, իրենց դաշնակից Գերմանիայի օգնությամբ, ներխուժեցին Անդրկովկաս, գրավեցին Կարսը, Արդահանը, Բաթումը և սպառնում էին ամբողջ Անդրկովկասին։ 1918 թ. գարնանը Անդրկովկասի վրա կախվեց գերմանա-թուրքական օկուպացիայի մահացու վտանգը։

Լենինի և Ստալինի, բոլշևիկների պարտիայի առաջնահերթ խնդիրը դարձավ, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, պաշտպանել Հոկտեմբերյան ռևոլուցիայի նվաճումները գերմանական իմպերիալիստներից, որոնք իրենց սվինների վրա, ինչպես ընկեր Ստալինն է ասում, բերում էին մի նոր, խայտառակ լուծ, որը բնավ ավելի լավ չէր հնից, թաթարականից։

Գերմանա-թուրքական օկուպանտների, ինչպես և ներքին կոնտրռևոլուցիոն ուժերի ճանկերից Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրելու մի ելք կար, դա սովետական կարգերի հաստատումն էր, որին և դիմեցին Անդրկովկասի բոլշևիկները։

Լենինի և Ստալինի ցուցումներով Սովետական իշխանության համար առաջին անգամ զինված պայքարի դրոշ բարձրացրեց Բաքվի պրոլետարիատը, որը, ինչպես տեսանք, Հոկտեմբերյան ռևոլուցիայի հենց սկզբից ճանաչել էր Սովետների իշխանությունը։ 1918 թ. փետրվար—մարտ ամիսների քաղաքա-

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 527—528։

գիական կռիվներում Բաքվի բանվորների ու նավաստիների զինված ջոկատները բոլշևիկների ղեկավարությամբ ջախջախեցին կոնտրռևոլուցիոն ուժերին և սովետական կարգեր հաստատեցին Բաքվում։

Ընկեր Ստալինը խոշոր նշանակություն էր տալիս Բաքվի պրոլետարիատի հաղթանակին։ «Բաքուն Սովետական իշխանության միջնաբերդն է Անդրկովկասում», ասում էր նա։ Բաքվի կոմունայի՝ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատության այդ փարոսի պահպանումն ու ամրապնդումը, նրա օրինակով Անդրկովկասի ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատագրելը, դառնում է ընկեր Ստալինի մտահոգության առարկան։ Ընկեր Ստալինը կապ է հաստատում Բաքվի Կոմունայի ղեկավարներ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի և մյուսների հետ, իր ցուցումներով ու խորհուրդներով օգնում է նրանց։ Այսպես, օրինակ՝ 1918 թ. մարտի 19-ին «Ստեփանին, Ալյոշային և մյուս բարեկամներին» գրած մի նամակում ընկեր Ստալինը կոնկրետ ցուցումներ է տալիս Բաքվի Սովետի դասակարգային և ազգային քաղաքականության մասին։ «Հարկավոր է Բաքուն ամրացնել ռազմական և ֆինանսական տեսակետից... հարկավոր է Բաքվի սովետին կից անհապաղ հիմնել մուսուլմանական բաժին, լայնորեն զարգացնել մուսուլմանական գրականությունը. հարկավոր է հիմնել նույնպիսի հայկական բաժին և առհասարակ մուսուլմանական-հայկական ստորին խավերին սովետի շուրջը համախմբելու քաղաքականություն վարել, իրենց վերնախավերի դեմ նրանց պայքարում։ Ձեզ օգնություն է գալիս երկու կողմից՝ Տաշքենդի կողմից և հյուսիսից. Ձեր Ստալին»։[1]

Նույն տարվա մարտի 25-ին ընկեր Ստալինը, որպես Ազգությունների Գործերի Ժողովրդական կոմիսար, կարգադրում է Մոսկվայի շրջանի զորքերի հրամանատարին ռազմական օգնություն ցույց տալ Բաքվին։ «Գրաբեր ընկ. Կվանտալիանին Բաքվի Սովդեպի ներկայացուցիչն է, հատկապես գործուղված է Մոսկվա՝ հրացան և այլն Բաքու փոխադրելու համար։ Խնդրում եմ պայմանավորվել նրա հետ՝ զորամաս, 5000 հրացան, երկու զրահապատ և երկու մոտոռներով ինքնաթիռ Բաքու ուղարկելու համար»։

Սովետական իշխանության հաղթանակը Բաքվում, ռևոլուցիոն շարժումների ծավալումը Անդրկովկասի մյուս շրջաններում, իրարանցում է առաջ բերում Սեյմում նստած կոնտրռևոլուցիոն մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների մեջ։ Նրանք երկրում մտցնում են սպիտակ տեռորի ռեժիմ. «խաչակրաց արշավանք» են հայտարարում Սովետական Ռուսաստանի դեմ, գերմանա-թուրքական օկուպանտների առաջ բաց են անում ճանապարհը՝ Բաքվի վրա արշավելու համար։ Ընկեր Ստալինը ծանոթանալով Անդրկովկասում կատարվող այդ իրադարձությունների հետ, 1918 թ. մայիսի 23-ին և 28-ին «Պրավդա»-յում հանդես է գալիս «Դրությունը Կովկասում» և «Կովկասում ստեղծված դրության շուրջը» հայտնի հոդվածներով, որտեղ մերկացնում է Սեյմի և գերմանա-թուրքական օկուպանտների հակասովետական դաշինքը, նրանց գիշատիչ-իմպերիալիստական քաղաքականությունը։

«Անդրկովկասի դրությունն ավելի ու ավելի սպառնալից է դառնում,— գրում է ընկեր Ստալինը։ Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության հայտարարումը (22 ապրիլի), որը պետք է արձակեր Թիֆլիսի «կառավարության»

[1] Ս. Դ. Բաղիրով. Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 103, Երևան, 1944 թ.։

ձեռքերը, փաստորեն նրան գցեց միջազգային գիշատիչների ծուղակը... Թիֆլիսի մենշևիկների ու նրանց կառավարության անկախությունը ռուսաստանյան ռևոլուցիայից՝ անխուսափելիորեն փոխարկվելու է նրանց ստրկական կախման թուրք-գերմանական «քաղաքակիրթ» գիշատիչներից։ Այդ կլինի Թիֆլիսի՝ իշխանության գլուխ կանգնած մենշևիկների դաշինքը թուրք-գերմանական իմպերիալիստների հետ ընդդեմ ռուսաստանյան ռևոլուցիայի»։[1]

Անդրկովկասը, հատկապես Բաքվի Սովետական իշխանությունը և Բաքվի նավթը գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանելը դառնում է Լենինի և Ստալինի ամենօրյա մտահոգության առարկան։ Ռուսաստանի հարավում, մասնավորապես Ցարիցինում և Կովկասում ստեղծված լուրջ վտանգը կանխելու համար, Լենինի առաջարկով, 1918 թ. հունիսին ընկեր Ստալինը գալիս է Ցարիցին։ Կազմակերպելով Ցարիցինի հերոսական պաշտպանությունը, ընկեր Ստալինը շատ դժվարություններ հաղթահարելով, կապ է հաստատում Բաքվի բոլշևիկների հետ, կազմակերպում է գերմանա-թուրքական օկուպանտների դեմ պայքարելու և Բաքվի կոմունային օգնելու գործը։ Հունիսի սկզբներին Ցարիցինից Բաքու են հասնում ընկեր Ստալինի հետևյալ մարտական ցուցումները.

«Ռադիոյով հաղորդել Բաքու, Շահումյանին, որ ես, Ստալինը, գտնվում եմ հարավում, շուտով կլինեմ Հյուսիսային Կովկասում։ Խասավ—Յուրտ—Պետրովսկ գիծը կկարգավորվի՝ ինչ էլ ուզում է լինի։ Բաքվին օգնություն ուղարկված է և ամեն ինչ կուղարկվի կանոնավոր։ Այսօր Ցարիցինից դուրս է գալիս հատուկ սուրհանդակ (нарочный) Շահումյանին ուղղված նամակով։ Հաց կուղարկենք ինչ էլ ուզում է լինի։ Խնդրում եմ ամրացնել Հաջի-Կաբուլի ֆրոնտը և չվհատվել։ Ստալին»։[2]

Մեծ առաջնորդի և զորավարի ցուցումները Բաքվի բոլշևիկներին զինում են մարտական ոգով, հերոսական պայքարի ու հաղթանակի նոր լիցք են տալիս նրանց։ 1918 թ. հունիսի 8-ին Շահումյանին գրած մի նամակում ընկեր Ստալինը իր և Լենինի կողմից առաջադրում է արտաքին և ներքին քաղաքականության մի ամբողջ ծրագիր, որով Բաքվի կոմունան պետք է առաջնորդվեր ստեղծված դժվարագույն պայմաններում։ Բաքվի բոլշևիկները Շահումյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի, Կորգանովի և մյուս կոմիսարների ղեկավարությամբ, անշեղորեն կենսագործում էին Լենինի-Ստալինի ցուցումները։ Բայց, չնայած դրան, նրանց չհաջողվեց ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերի օղակում, Սովետական Ռուսաստանից կտրված, իշխանությունը մինչև վերջ պահել իրենց ձեռքում։

Բաքվի կոմունայի համար ստեղծված այդ ծանր պայմաններում, էսեռամենշևիկյան և դաշնակցական կոնտրռևոլուցիոն բլոկը, օգտագործելով պարենային դժվարությունները և գերմանա-թուրքական զորքերի ներխուժման վտանգը, որոշում է Բաքու հրավիրել Հյուսիսային Պարսկաստանում գտնվող անգլիական զորքերին։

Ընկեր Ստալինը Շահումյանից տեղեկանալով այդ մասին, հուլիսի 21-ին ուղիղ գծով Ցարիցինից Մոսկվա՝ Արտաքին Գործերի Ժողկոմ Չիչերինին հայտնում է. «Բաքվի շրջանն իրոք վտանգված է թուրքական զորքերի կողմից,

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 107։

[2] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 181-182, Երևան, 1944 թ.։

որոնք գերմանական սպաների գլխավորությամբ կռվում են Բաքվի զորամասերի դեմ։ Պետք է մտածել, որ այսպես կոչված համաձայնությունը գերմանացիների հետ՝ քող է հանդիսանում Բաքվի վրա հարձակվելու համար։ Ավելորդ է ասել, որ ամբողջ բուրժուազիան թուրքերի կողմն է»։[1]

Նույն օրը ընկեր Ստալինը Մոսկվա՝ Լենինին և Բաքու՝ Շահումյանին հետևյալ հեռագիրն է ուղարկում.

«Վերջին տեղեկությունների համաձայն, Բաքվի Սովդեպի նարոդնիկական ֆրակցիաները ձգտում են վարյագներին— անգլիացիներին իբր թե օգնության հրավիրել՝ թուրքական զավթիչների դեմ։ Նկատի ունենալով անգլո-ֆրանսիացիների նման օգնության փորձը Մուրմանում և Հեռավոր Արևելքում, կարելի է համոզված ասել, որ նարոդնիկական ֆրակցիաները չգիտակցելով այդ, հող են պատրաստում Բաքվի և նրա շրջանների օկուպացիայի համար։ Դրա հետ միասին, անկասկած է, որ նարոդնիկական պարտիաների փորձերը տնայնագործական եղանակով միջազգային քաղաքականության հարցերը լուծելու, այն ժամանակ, երբ Սովետների Համառուսական Հինգերորդ Համագումարը որոշակիորեն արտահայտվեց Ռուսաստանի Սովետական ռեսպուբլիկայի անկախ քաղաքականության մասին, անկախ ինչպես գերմանացիներից, այնպես էլ անգլիացիներից, նարոդնիկական պարտիաների այդպիսի փորձերը հանդիսանում են Ռուսաստանի կամքի կոպիտ խախտում՝ հօգուտ մի խումբ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների։ Համառուսական Կենտգործկոմի և Ժողովրդական Կոմիսարների Սովետի անունից պահանջում եմ Բաքվի ամբողջ Սովետից, բանակից և նավատորմից լիովին ենթարկվել Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների կամքին։ Ի կատարումն Սովետների Հինգերորդ Համագումարի որոշման, պահանջում եմ Բաքվի Ժողկոմսովետից անվերապահորեն կենսագործել անկախ միջազգային քաղաքականություն և վճռական պայքար մղել օտարերկրյա կապիտալի գործակալների դեմ, մինչև իսկ բանտարկելով համապատասխան միսիայի անդամներին»։[2]

Ստանալով ընկեր Ստալինի այս հեռագիրը, հուլիսի 22-ին Վ. Ի. Լենինը ռադիոյով Շահումյանին հայտնում է. «Կարող եմ միայն լիովին պաշտպանել Ստալինի հեռագիրը՝ Սովետների Հինգերորդ համագումարի կամքի մասին՝ ընդդեմ Բաքվի Սովդեպի նարոդնիկական ֆրակցիայի»։[3]

Պրոլետարական ռևոլուցիայի մեծ առաջնորդը ամբողջապես պաշտպանում է ընկեր Ստալինի ցուցումները։ Ընկեր Ստալինը Բաքվի բոլշևիկներին տալիս էր իսկական լենինյան դիրեկտիվներ։

* * *

Մեծ է եղել ընկեր Ստալինի ղեկավար դերը Անդրկովկասի բոլշևիկների, ռևոլուցիոն բանվորների և գյուղացիների նկատմամբ, նաև հերոսական այն պայքարի տարիներին, որ նրանք մղում էին մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կոնտրռևոլուցիոն «կառավարությունների» դեմ 1918—1920 թվականներին։ Այդ մի շրջան էր, երբ, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում,

[1] Центральный Архив Красной Армии (Москва), д. 119 829. л. 162.

[2] Տես Документы по истории гражданской войны в СССР, т. I. стр. 291—292. Москва, 1940 г.

[3] Նույն տեղում, էջ 292։

սոցիալիստական ռևոլուցիան ապրում էր ամենակրիտիկական մոմենտներից մեկը, ամենայն հավանականությամբ, նույնիսկ ամենակրիտիկական մոմենտը։ Այդ մի շրջան էր, երբ օտարերկրյա ինտերվենտներին և նրանց օգնությամբ գլուխ բարձրացրած ներքին կոնտրռևոլուցիոն ուժերին ջախջախելու, ինչպես և Կարմիր Բանակում դավաճան Տրոցկու և նրա կողմնակիցների կապիտուլյանտական, քայքայիչ աշխատանքին վերջ դնելու համար, բոլշևիկների պարտիան և Սովետական կառավարությունը ընկեր Ստալինին էին հանձնարարում ամենապատասխանատու օպերացիաները։ Ինչպես միշտ, այդ շրջանում ևս, ընկեր Ստալինը Լենինի ամենամերձավոր զինակիցն էր, նրա առաջին օգնականը։ Նշված ժամանակաշրջանում ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, ղեկավարում էր կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության ընդհանուր աշխատանքները, քաղաքացիական հերոսական կռիվների բովում անձամբ գլխավորում Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի, նվաճումները պաշտպանելու և ամրացնելու պատմական մեծ գործը։

«Ընկեր Ստալինը 1918—1920 թ. թ. ժամանակաշրջանում ճանդիսանում էր թերևս այն միակ մարդը, որին Կենտրոնական Կոմիտեն մարտական մի ֆրոնտից մյուսն էր գցում, ընտրելով ռևոլուցիայի համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի աճավոր տեղերը»,— գրում է ընկեր Վորոշիլովը։[1]

Սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի համար ստեղծված այդ դժվարին պայմաններում իսկ, ընկեր Ստալինի ուշադրությունից չէր վրիպում Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության գործը։ Ինչպես Ռուսաստանի մյուս ժողովուրդներին, նույնպես և Անդրկովկասի ժողովուրդներին նա կազմակերպում, ոտքի էր հանում Հոկտեմբերյան ռևոլուցիայի նվաճումները պաշտպանելու և այդ միակ հնարավոր ու ճիշտ ճանապարհով սեփական ազատությունը ձեռք բերելու համար։

Մարքսի, Էնգելսի, Լենինի օրինակով, ընկեր Ստալինը ռևոլուցիայի ընդհանուր շահերից ելնելով, ազգային ճարցում հետևողականորեն անց էր կացնում պրոլետարական ինտերնացիոնալ գիծ։ Այս տեսակետից նրա գլխավորած Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը բացառիկ կարևոր դեր խաղաց ցարիզմի և ժամանակավոր կառավարության օրոք ճնշված ազգություններին ռուս մեծ ժողովրդի շուրջը համախմբելու, ազգային-ազատագրական շարժումները սոցիալիստական ռևոլուցիայի ուղու վրա դնելու գործում։ Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ գործադրված բոլշևիկյան պարտիայի և սովետական կառավարության ազգային քաղաքականությունը, մի քաղաքականություն, որն ամբողջապես հիմնված էր Լենին-Ստալինի մշակած ազգային հարցի բոլշևիկյան ուսմունքի վրա, Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակի կարևոր պայմաններից մեկը հանդիսացավ։ Լենինյան-Ստալինյան իմաստում ազգային քաղաքականության շնորհիվ միայն ապահովվեց Ռուսաստանի ժողովուրդների միասնական ֆրոնտը օտարերկրյա ինտերվենտների և ներքին կոնտրռևոլուցիոն ուժերի դեմ։

Ընկեր Ստալինը մեծ օգնություն ցույց տվեց Անդրկովկասի ժողովուրդ-

[1] Կ. Ե. Վորոշիլով, «Ստալինը և Կարմիր Բանակը», էջ 5—6, Երևան, 1939 թ.։

ներին Սովետական Ռուսաստանի վրա կատարած Անտանտայի երեք արշավանքների ծանր տարիներին։

Հայտնի է, որ առաջին համաշխարհային պատերազմում, Գերմանիայի պարտությունից հետո, Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպեցին Անտանտայի պետությունները։ Անտանտայի իմպերիալիստները ցանկանում էին ոչ միայն տապալել սովետական կարգերը, այլև հավատարիմ իրենց «բաժանիր, որ տիրես» գիշատիչ սկզբունքին, բաժան-բաժան անել Ռուսաստանը, գաղութային ստրկության լծի տակ դնել փոքր ազգություններին։

1919—1920 թ. թ. անգլո-ֆրանսիական, ամերիկյան իմպերիալիստները օկուպացիայի ենթարկեցին Անդրկովկասը և տեղական կոնտրռևոլուցիոներների՝ դաշնակների, մենշևիկների ու մուսավաթականների հետ միասին, Անդրկովկասը դարձրին հակասովետական պայքարի բազա, օգնության ձեռք մեկնեցին Ռուսաստանի սպիտակ-գվարդիական գեներալներին՝ Կոլչակին, Դենիկինին, Վրանգելին և ուրիշներին։ Անգլիական, ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստները գաղութային ծանր ռեժիմ հաստատեցին Անդրկովկասում։

Լենինի հետ միասին կազմակերպելով և գլխավորելով Անտանտայի իմպերիալիստների դեմ մղվող հայրենական պատերազմը, ընկեր Ստալինը Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդներին, ցույց էր տալիս անգլո-ֆրանսիական, ամերիկյան իմպերիալիստների գիշատիչ նպատակները, նշում էր իմպերիալիզմի լծից նրանց ազատագրության իսկական ուղին։

«Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտայի միջև բորբոքվող մահացու պայքարի պայմաններում, ասում էր ընկեր Ստալինը, ծայրամասերի համար հնարավոր է միայն երկու ելք.

կա՛մ Ռուսաստանի հետ միասին, և այն ժամանակ— ծայրամասերի աշխատավոր մասսաների ազատագրումն իմպերիալիստական ճնշումից.

կա՛մ Անտանտայի հետ միասին, և այն ժամանակ— անխուսափելի իմպերիալիստական լուծ։

Երրորդ ելք չկա։

Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և մյուսների այսպես կոչված անկախությունը լոկ մի խաբուսիկ երևութականություն է, որը քողարկում է այդ, թող ներվի ասել, պետությունների կատարյալ կախումը իմպերիալիստների այս կամ այն խմբից»։[1]

1919 թ. ապրիլի 23-ին «Իզվեստիա»-յում տպագրված «Անգլիական իմպերիալիզմի գործակալների կողմից Բաքվի 26 ընկերների գնդակահարության շուրջը» հոդվածում ընկեր Ստալինը մերկացրեց անգլիական իմպերիալիստների մասնակցությունը Բաքվի 26 կոմունարների, Անդրկովկասի պրոլետարիատի լավագույն ներկայացուցիչներ, կոմունիզմի անվեհեր մարտիկներ՝ Շահումյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի և մյուսների գազանային սպանության գործում։ Հրապարակելով 26 կոմունարների գնդակահարության վերաբերյալ փաստաթղթերը, փաստաթղթեր, որոնք, ինչպես ընկեր Ստալինն է ասում, ոչ թե խոսում, այլ աղաղակում են անգլիական դործա-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 201։

կալների սանձարձակության մասին, գրում է. «Ոտից գլուխ նեխած ու ամեն մի բարոյական կերպարանք կորցրած» անգլիական իմպերիալիստական մարդակերները «Բաքվի և անդրկասպյան «բնիկների» հետ այնպես են դատաստան տեսնում, ինչպես Կենտրոնական Աֆրիկայի սևամորթների հետ»։[1]

20 կոմունարների գնդակահարության մասին ընկեր Ստալինը խոսում է նաև Պարտիայի պատմության համառոտ դասընթացի մեջ։ «Գերմանիայի պարտվելուց և Ուկրաինայից ու Անդրկովկասից նրա զորքերի հեռանալուց հետո, ասում է ընկեր Ստալինը, անգլո-ֆրանսիացիները բռնեցին Գերմանիայի տեղը, իրենց նավատորմը Սև ծով մտցնելով և իրենց զորքերն ափ հանելով Օդեսայում, Անդրկովկասում։ Օկուպացված մարզերում Անտանտի ինտերվենտների տիրապետությունն այնպիսի գազանության էր հասել, որ նրանք կանգ չէին առնում բանվորների ու գյուղացիների ամբողջ խմբերի նկատմամբ զենքով դատաստան տեսնելու առաջ։ Վերջում, Թուրքեստանն օկուպացիայի ենթարկելուց հետո, իմպերիալիստների լկտիությունն այնտեղ հասավ, որ նրանք Անդրկասպյան երկիրը տարան Բաքվի 26 ղեկավար բոլշևիկներին՝ ընկերներ Շահումյանին, Ֆիոլետովին, Ջափարիձեին, Մալիգինին, Ադիսբեկովին, Կորգանովին և ուրիշներին ու էսերների օգնությամբ գազանաբար գնդակահարեցին նրանց»։[2]

Ինտերվենցիայի ու քաղաքացիական կռիվների ծանր տարիներին, երբ Սովետական Ռուսաստանը գտնվում էր, ինչպես ընկեր Ստալինն է ասում, փոթորկի ու կրակի մեջ և հնարավորություն չուներ անհրաժեշտ օգնություն ցույց տալու Անդրկովկասին, Անտանտայի իմպերիալիստները, ինչպես և Թուրքական զավթիչները, այդ տարիներին անպատիժ կերպով կեղեքում ու կողոպտում էին Անդրկովկասի ժողովուրդներին։

Դենիկինի ջախջախումից հետո, 1920 թվի սկզբներին Լենինի և Ստալինի ցուցումներով, Օրջոնիկիձեի, Կիրովի, Միկոյանի գլխավորությամբ, հերոսական Կարմիր Բանակը օգնության եկավ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդներին։ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ, տապալեցին մուսավաթականների անարգ լուծը և հաստատեցին Սովետական իշխանություն։

Ադրբեջանից հետո, Սովետական կարգերի համար զինված պայքարի ելան Հայաստանի և Վրաստանի բանվորներն ու գյուղացիները։ 1920 թ. մայիսին Հայաստանի մի շարք շրջաններում (Ալեքսանդրապոլ, Կարս, Սարիղամիշ, Նոր-Բայազետ, Թիլիջան, Իջևան, Զանգեզուր) բռնկվեց մինչ այդ չտեսնված մասսայական ռևոլուցիոն շարժում՝ դաշնակների մարիոնետային «կառավարության» ու նրանց իմպերիալիստական տերերի դեմ։ Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և Վրաստանում հերթական հարց դարձավ։ Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի համար Անդրկովկասում մղված պայքարի այս նոր, վերջին էտապը, համընկավ Անտանտայի իմպերիալիստների հակասովետական նոր քայլերի հետ։ Անտանտայի իմպերիալիստները խայտառակ պարտություն կրելով Ռուսաստանում, 1920 թ. աշնանը

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 283։
[2] Տես Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, էջ՝ 323, Երևան, 1946 թ.։

փորձեցին ամրանալ Անդրկովկասում։ «Անտանտան, ասում է ընկեր Ստալինը 1920 թ. հոկտեմբերի 27-ին ռեսպուբլիկայի քաղաքական դրության մասին Վլադիկավկազում տված զեկուցման մեջ, ըստ բոլոր տվյալների, մտադիր չէ զենքը ցած դնելու, նա, ըստ երևույթին մտադիր է ռազմական գործողությունների ծանրության կենտրոնը փոխադրել հարավ, Անդրկովկասի շրջանը»։[1]

Վ. Ի. Լենինը 1920 թ. նոյեմբերի 20-ին Մոսկվայի պարտկոնֆերանսում միջազգային դրության մասին տված իր զեկուցման մեջ անդրադառնալով Կովկասի դեպքերին, ասում է. «Կովկասում այժմ միահյուսվում են չափազանց բարդ պայմաններ, որոնցում կողմնորոշվելը վերին աստիճանի դժվար է, ընդորում նույնիսկ օր-օրից կարող են պատերազմ փաթաթել մեզ... Լրագրային հաղորդագրություններն այն մասին, թե ինչ է կատարվում Հայաստանում, Թուրքիայում, որոշ պատկերացում են տալիս ձեզ այդ մասին։ Ստեղծվում է չափազանց խճճված դրություն, բայց ես ամբողջովին հավատացած եմ, որ դրանից մենք դուրս կգանք... Մենք միանգամայն հանգիստ կարող ենք նայել դրա վրա, դա կլինի պատերազմ հեռավոր ծայրամասում, մեր ուժերի լիակատար գերակշռումով, ապահովելով հավանաբար նույնիսկ ավելի մեծ հաղթանակ, քան այն, որ ստացվեց լեհական պատերազմից»։[2]

1920 թ. աշնանը Կովկասում ստեղծված այդ լարված քաղաքական իրադրությունն էր, Սովետական Ադրբեջանը, Հայաստանն ու Վրաստանը Անտանտայի նոր ավանտյուրայից փրկելու և ամբողջ Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու կարևորագույն հարցն էր, որ Անդրկովկասբերին ընկեր Ստալինին։ Պրոլետարական մեծ զորավարի երևալն Անդրկովկասում, ինքնին արդեն նշան էր Կովկասյան ֆրոնտի ծայր աստիճան լրջության։

1920 թ. նոյեմբերի սկզբին ընկեր Ստալինը գալիս է Բաքու։ Բաքվի պրոլետարիատը, Անդրկովկասի ողջ աշխատավորությունը ցնծությամբ են դիմավորում սիրելի առաջնորդի գալուստը։ Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմը նոյեմբերի 4-ի հատուկ կոչով պարտիայի անդամներին, Բաքվի բանվորներին և երկրի ողջ աշխատավորության հայտնում է սիրելի առաջնորդի Բաքու գալը։

«Մեզ մոտ, Բաքու է ժամանել բացառիկ անձնազոհության, տոկունության և եռանդի տեր բանվորական առաջնորդ, ռևոլուցիոն տակտիկայի միակ փորձված և բոլորի կողմից ճանաչված դիտակ, Կովկասի ու Արևելքի պրոլետարական ռևոլուցիայի առաջնորդ ընկեր Ստալինը։

ԱԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն իմանալով ընկեր Ստալինի համեստության մասին, և այն, որ նա չի սիրում պաշտոնական հանդիսավորությամբ իրեն դիմավորելը, հարկադրված էր հրաժարվել նրա գալստյան հետ կապված հատուկ ժողովներ գումարելուց։

ԱԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն գտնում է, որ լավագույն ողջույնը, լավագույն դիմավորումը, որ մեր պարտիան, Բաքվի պրոլետարիատը և Ադրբեջանի աշխատավորությունը կարող էին ցույց տալ մեր սիրելի առաջնորդին և ուսուցչին, կլինի մեր բոլոր ուժերի նորանոր լարումը՝ պարտիական և սովետական աշխատանքը ըստամենայնի ամրապնդելու համար։

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 420։
[2] Ленин, Сочинения, т. XXV, стр. 487, 1929 г.

Բոլորս դեպի համերաշխ, դեպի մարտական աշխատանք, արժանավայել՝ պրոլետարական կոփված մարտիկին, Բաքվի պրոլետարիատի առաջին կազմակերպիչ և առաջնորդ ընկեր Ստալինին»։[1]

Նոյեմբերի 6-ին Բաքվի սովետի հանդիսավոր նիստում ընկեր Ստալինը հանգես է գալիս «Պրոլետարական դիկտատուրայի երեք տարին» զեկուցումով։ Նախքան զեկուցմանն անցնելը, ընկեր Ստալինը Ռուսաստանի սովետական կառավարության կողմից ջերմորեն ողջունում է Ադրբեջանի Ռևկոմին և 11-րդ Կարմիր Բանակին, որը, ինչպես նա է ասում, «ազատագրեց Ադրբեջանը և իր կրծքով պաշտպանում է նրա ազատությունը»։[2] Այնուհետև ընկեր Ստալինը խոսում է Սովետական Ռուսաստանի պայքարի ու հաղթանակների, ինտերվենցիայի ու քաղաքացիական կռիվների պայմաններում կատարված սոցիալիստական շինարարության մասին։ «Մենք ստիպված էինք կառուցել կրակի տակ, ասում է ընկեր Ստալինը։ Պատկերացրեք ձեզ մի որմնադիր, որը մի ձեռքով կառուցելով, մյուս ձեռքով պաշտպանում է այն տունը, որ նա կառուցում է»։[3]

Բաքվի պրոլետարիատին ու Սովետական Ադրբեջանի ողջ աշխատավորությանը ընկեր Ստալինը կոչ է անում լծվել սոցիալիստական հասարակարգի կառուցման, համառուսաստանյան մասշտաբով տնտեսությունը գիտակցաբար, պլանաչափորեն կազմակերպելու գործին։

Իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը խոսում է Սովետական ռեսպուբլիկայի միջազգային դրության մասին։ «Կար ժամանակ,— ասում է ընկեր Ստալինը,— երբ Սովետական Ռուսաստանին չէին նկատում, նրան հաշվի չէին առնում, նրան չէին ճանաչում։ Այդ առաջին շրջանն էր... այժմ մեզ ոչ միայն նկատում են որպես սոցիալիստական տերություն, ոչ միայն ճանաչում են փաստորեն, այլ նաև մի քիչ էլ վախենում են»։[4]

Նշելով Սովետական իշխանության արտաքին քաղաքականության հեռանկարները, ընկեր Ստալինն ասում է. «Մենք կանգնած ենք մեր արտաքին թշնամիների լիկվիդացման շեմքին, մեր բոլոր պետական ապարատները պատերազմական ռելսերից տնտեսական ռելսերի փոխադրելու շեմքին։ Մենք արտաքին քաղաքականության մեջ կողմնակից ենք խաղաղության, մենք պատերազմի կողմնակիցներ չենք։ Բայց եթե մեր վզին պատերազմ փաթաթեն, իսկ որոշ տվյալներ ասում են, որ Անտանտան աշխատում է պատերազմական գործողությունների թատերաբեմը փոխադրել հարավ, Անդրկովկաս, եթե մեր կողմից մի քանի անգամ ծեծ կերած այդ Անտանտան կրկին անգամ պատերազմ փաթաթի մեր վզին, ապա ինքնին պարզ է, որ մենք զենքը բաց չենք թողնի ձեռքից, չենք ցրի մեր զորքերը։ Ինչպես և առաջ, մենք բոլոր ջանքերը գործ կդնենք, որպեսզի Կարմիր Բանակը բարգավաճի և մարտական պատրաստության մեջ լինի, որ նա կարողանա այնպես խիզախորեն ու քաջաբար պաշտպանել Սովետական Ռուսաստանը թշնամիներից, ինչպես նա պաշտպանել է նրան մինչև այժմ»։[5]

---

1 „Коммунист", № 155, от 4 ноября 1920 г. Баку.
2 Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 423։
3 Նույն տեղում, էջ 431։
4 Նույն տեղում, էջ 423—424։
5 Նույն տեղում, էջ 432։

Բաքվում ընկեր Ստալինը մոտիկից ծանոթանում է նաև Հայաստանի ծանր դրության հետ, որն ստեղծվել էր թուրքական զորքերի առաջխաղացման, Կարսն ու Ալեքսանդրապոլը գրավելու հետևանքով և վճռական միջոցների է դիմում հայ ժողովրդին Անտանտայի ու թուրքական զավթիչների ճանկերից ազատագրելու համար։ Ադրբեջանի Կ(ր)Պ ԿԿ-ի Քաղբյուրոյի և ՌԿ(բ)Պ Կովկասյան բյուրոյի անդամների միացյալ նիստում ընկեր Ստալինը պահանջում է. «Ինչ էլ որ լինի պետք է փրկել Հայաստանը, շուտով փրկել Հայաստանը»։

Մեծ առաջնորդի Բաքու գալը, նրա զեկուցումը, հեղինակավոր խոսքն ու գործնական ցուցումները պայքարի ու հաղթանակի մի ամբողջ ծրագիր դարձան Անդրկովկասի բոլշևիկների, բանվորների ու գյուղացիների համար։

Ընկեր Ստալինի Բաքու գալը վճռական նշանակություն ունեցավ Ադրբեջանում սովետական կարգերն ամրապնդելու և Հայաստանն ու Վրաստանը Անտանտայի իմպերիալիստների ու նրանց անարգ գործակալների՝ դաշնակների ու մենշևիկների արյունոտ լծից ազատագրելու գործում։

Ընկեր Ստալինի Բաքու գալն ապահովեց սոցիալիստական ռևոլուցիայի վերջնական հաղթանակը ամբողջ Անդրկովկասում։

Ավելի քան մի շաբաթ Բաքվում մնալուց հետո, ընկեր Ստալինը գնում է Թեմիր-Խան-Շուրա՝ մասնակցում Դաղստանի ժողովուրդների համագումարին և հանդես գալիս Դաղստանի սովետական ավտոնոմիայի վերաբերյալ դեկլարացիայով։ Նոյեմբերի կեսերին նա մեկնում է Վլադիկավկազ՝ մասնակցում Թերեքի մարզի ժողովուրդների համագումարին՝ զեկուցումով հանդես գալիս «Թերեքի մարզի սովետական ավտոնոմիայի մասին»։

Վերադառնալով Մոսկվա, ընկեր Ստալինը իր հարավային գործուղման մասին զրույց է ունենում «Պրավդայի» աշխատակցի հետ, որը և հրապարակվում է նոյեմբերի 30-ի «Պրավդա»-յում «Դրությունը Կովկասում» վերնագրով։

Իր զրույցի մեջ ընկեր Ստալինը բազմակողմանի վերլուծության է ենթարկում Կովկասում ստեղծված քաղաքական նոր իրադրությունը, բացահայտում է Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում Անտանտայի իմպերիալիստների հետապնդած ագրեսիվ նպատակները։

«Ռևոլուցիայի համար Կովկասի կարևոր նշանակությունը ո՛չ միայն նրանով է որոշվում, որ նա հումքի, վառելիքի և պարենի աղբյուր է հանդիսանում, այլև իր դիրքով Եվրոպայի և Ասիայի միջև, մասնավորապես Ռուսաստանի և Թուրքիայի միջև, և տնտեսական ու ստրատեգիական կարևորագույն ճանապարհների առկայությամբ (Բաթում—Բաքու, Բաթում—Թավրիզ, Բաթում—Թավրիզ—Էրզրում)։

Այս բոլորը հաշվի է առնում Անտանտան, որն այժմ տիրապետելով Կոստանդնուպոլսին, Սև ծովի այդ բանալուն, կուզեր պահպանել Անդրկովկասի վրայով դեպի Արևելք տանող ուղիղ ճանապարհը։

Ո՛վ վերջիվերջո կհաստատվի Կովկասում, ո՛վ կօգտվի նավթից և դեպի Ասիայի խորքը տանող ամենակարևորագույն ճանապարհներից, ռևոլուցիան թե Անտանտան,— այս է ամբողջ հարցը։

Ադրբեջանի ազատագրումն զգալի չափով թուլացրեց Անտանտայի դիրքը Կովկասում։ Անտանտայի դեմ Թուրքիայի մղած պայքարը նույն հետևանքներին հասցրեց։ Այնուամենայնիվ, Անտանտան չի վհատվում և հյուսում է իր ոստայնը Կովկասում։

Թիֆլիսը կոնտրռևոլուցիոն աշխատանքի բազա դարձնելը, Ադրբեջանի, Դաղստանի և Թերեքի մարզի լեռնականների բուրժուական կառավարություններ կազմելը, իհարկե, Անտանտայի միջոցներով և բուրժուական Վրաստանի օգնությամբ, սիրախաղր քեմալիստների հետ և Թյուրքիայի պրոտեկտորատի տակ կովկասյան ժողովուրդների ֆեդերացիա կազմելու իդեաների քարոզը, Անտանտայի սարքած մինիստրական ոստյունախաղը Պարսկաստանում, և Պարսկաստանի ողողումը սիպայիներով,— այս բոլորը և նման շատ բաներ այն մասին են խոսում, որ Անտանտայի հին գայլերը քնած չեն»։[1]

Որքան հատուկ պարզությամբ ու խորաթափանցությամբ ընկեր Ստալինը ցույց է տալիս Անտանտայի և ռևոլուցիայի շահերը Կովկասում։

«Որո՞նք են Անտանտայի շանսերը և որո՞նք են ռևոլուցիայի շանսերը Կովկասում։

Կասկած չկա, որ Անտանտայի շանսերը, օրինակ, Դաղստանի և Թերեքի մարզում զերոյի են հավասարվել...

Նույնքան փոքր են Անտանտայի շանսերը իր անկախությունը ձեռք բերած և Ռուսաստանի ժողովուրդների հետ կամավոր դաշինք կնքած Ադրբեջանում։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ դեպի Ադրբեջան ու Բաքվի նավթը մեկնած Անտանտայի գիշատիչ թաթերը միայն նողկանք կառաջացնեն Ադրբեջանի աշխատավորության մեջ։

Անտանտայի շանսերը Հայաստանում և Վրաստանում նույնպես զգալի չափով ընկել են Վրանգելի ջախջախումից հետո։ Դաշնակների Հայաստանն ընկավ, անկասկած, որպես Անտանտայի պրովոկացիայի զոհ, որը նրան գրգռեց Թուրքիայի դեմ, և հետո նրան խայտառակ կերպով լքեց-թողեց Թուրքերի հոշոտմանը։ Հազիվ թե կարելի է կասկածել, որ Հայաստանն այլևս փրկության ոչ մի հնարավորություն չունի, բացի մեկից՝ դաշինքից Սովետական Ռուսաստանի հետ։ Այս հանգամանքը, կասկած չկա, դաս կծառայի ա՛յն բոլոր ժողովուրդների համար, որոնց բուրժուական կառավարությունները չեն դադարում ստորաքարշություն անել Անտանտայի առջև, և ամենից առաջ Վրաստանի համար»։[2]

Ընկեր Ստալինի զրույցը բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Կովկասի ժողովուրդներին իմպերիալիզմի դեմ մոբիլիզացնելու, Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակը Անդրկովկասում մինչև վերջ հասցնելու գործում։

1920 թվականի աշնանը Անտանտայի իմպերիալիստների և թուրքական դավթիչների նոր ագրեսիայի հետևանքով ստեղծված լարված իրադրության պայմաններում, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ զինված ապստամբություն բարձրացրին դաշնակների «կառավարության» դեմ։ Լենինի և Ստալինի ցուցումներով նրանց օգնության եկավ Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը։ 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, Կարմիր Բանակի օգնությամբ տապալեցին դաշնակների արյունոտ լուծը և Հայաստանում հաստատեցին Սովետական իշխանություն։ Հայ ժողովրդի ազատագրության հարցով միշտ մտահոգված նրա մեծ բարեկամ ընկեր

[1] Ի. Ստալին, երկեր, հատ. 4, էջ 433—455։

[2] Նույն տեղում, էջ 455։

Ստալինը, 1920 թ. դեկտեմբերի 4-ի «Պրավդա»-յում հանդես եկավ «Կեցցե Սովետական Հայաստանը» նշանավոր հոդվածով, որտեղ հետևյալ հավերժ հիշատակության արժանի խոսքերը գրեց.

«Տանջված ու բազմաչարչար, Անտանտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,— բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր։

Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ո՛չ Վիլսոնի տխրահռչակ «տասնչորս կետերը», ո՛չ Ազգերի լիգայի մեծագղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»— չկարողացան (և չէի՛ն կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։[1]

Սովետական կարգերի հաստատումից հետո էլ, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ դաշնակները ցած չդրին իրենց զենքը։ 1920 թվի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում նրանք քեմալական Թուրքիայի հետ կնքեցին ստորացուցիչ մի պայմանագիր, որն ամբողջապես ուղղված էր Սովետական Հայաստանի դեմ։ 1921 թ. փետրվարին Անտանտայի իմպերիալիստների և թուրքական զավթիչների օգնությամբ նրանք կոնտրռևոլուցիոն խռովություն բարձրացրին Հայաստանի երիտասարդ Սովետական իշխանության դեմ։ Սակայն դաշնակների և նրանց իմպերիալիստական տերերի այդ ավանտյուրաները ձախողվեցին Լենինի և Ստալինի, Սովետական Ռուսաստանի օգնությամբ։

1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները Կարմիր Բանակի օգնությամբ տապալեցին մենշևիկների անարգ լուծը և երկրում հաստատեցին Սովետական իշխանություն։ Վրաստանում սովետական կարգերի հաստատումով ավարտվեց սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի համար Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների մղած պայքարը։ Լենինի և Ստալինի, նրանց լավագույն զինակիցների ու աշակերտների՝ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ա. Միկոյանի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, ամբողջ Անդրկովկասի վրա ծածանվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթական կարմիր դրոշը։

* * *

Այսպիսով, ընկեր Ստալինը, իր մեծ ուսուցչի՝ Լենինի հետ միասին, հանդիսացավ Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի ոգեշնչողն ու կազմակերպիչը ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում։ Նա կազմակերպեց ու պայքարի հանեց Անդրկովկասի ժողովուրդներին իմպերիալիզմի ու ազգային բուրժուազիայի դեմ, նա ցույց տվեց, որ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության միակ ուղին, դա Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի գծած ուղին է։

Ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, ռուս մեծ ժողովրդի, նրա առա-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 158։

ջատար ջոկատի՝ ռևոլուցիոն պրոլետարիատի շուրջը համախմբեց ինչպես Ռուսաստանի մյուս բոլոր ճնշված ժողովուրդներին, այնպես էլ Անդրկովկասի ժողովուրդներին, նրանց առաջնորդեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի միակ ճիշտ ուղիով, և դրանով իսկ, ապահովեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակը Անդրկովկասում։ Սոցիալիստական ռևոլուցիան, միայն Սովետական Ռուսաստանի օգնությամբ կարող էր հաղթել և հաղթեց Անդրկովկասում։ «Զլիներ Սովետական Ռուսաստանը, ասում էր ընկ. Ս. Օրջոնիկիձեն, չէր լինի նաև Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը և Սովետական Հայաստանը»։[1]

Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ Անդրկովկասի ժողովուրդները ազատագրվեցին ազգային ու դասակարգային դարավոր ճնշումից, իմպերիալիզմի և ազգային բուրժուազիայի լծից։

Լենինի և Ստալինի, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ մղած ռևոլուցիոն պայքարի գնով նրանք ձեռք բերեցին իրենց վերջնական ազատությունը և պետականությունը։ Լենինը և Ստալինը հանդիսացան Անդրկովկասի ժողովուրդների ազատարարները։

Ընկեր Ստալինը ոչ միայն կազմակերպեց ու գլխավորեց սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակը Անդրկովկասում, այլև որպես ազգային հարցի ականավոր մասնագետ, Անդրկովկասի ժողովուրդների պատմությանը, կուլտուրային, կենցաղին ու սովորություններին մոտիկից ծանոթ, լավատեղյակ անձնավորություն, ամենայն ճշտությամբ գծեց սովետական կարգերի ամրապընդման և սոցիալիզմի կառուցման ուղիները։ Լենինի հետ միասին նա հիմք դրեց Անդրկովկասի ժողովուրդների այնպիսի մի անխախտելի բարեկամության, որը չէր տեսնված և անհնարին էր բուրժուական կարգերում։ Լենինի հետ միասին նա գծեց Անդրկովկասի արդյունաբերության ու գյուղատնտեսության, էլեկտրիֆիկացիայի ու ոռոգման զարգացման հոյակապ պլանները։

Ընկեր Ստալինի պատմական մեծ դերը կայացավ նաև նրանում, որ նա ջախջախիչ հարված հասցրեց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամենավտանգավոր ու ամենադաժան թշնամուն՝ վրացական, հայկական և ադրբեջանական նացիոնալիզմին։

Սովետական իշխանության տարիներին, նախկինում հետամնաց ագրարային երկիրը, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերածվեց սոցիալիստական ինդուստրիայի, սոցիալիստական գյուղատնտեսության, սոցիալիստական կուլտուրայի առաջավոր մի երկրի։ Ստալինյան հնգամյակները արմատապես փոխեցին Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների դեմքը։ Ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, գիտության ու արվեստի բոլոր բնագավառներում արագորեն աճեցին ազգային կադրեր, ծաղկեց Անդրկովկասի ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Նրանք ապրեցին հսկական կուլտուրական ռևոլուցիա։ Անդրկովկասի ժողովուրդները, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ, Մեծ Ստալինի ղեկավարությամբ կառուցելով սոցիալիզմը, կանգնեցին կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ ճանապարհի վրա։

[1] Первый Закавказский съезд Советов. стр. 69. 1923 г.. Тифлис.

Ստալինի անվան հետ է կապված Անդրկովկասի ժողովուրդների ինչպես ազատագրության, այնպես էլ սոցիալիստական վերածննդի ամբողջ պատմությունը։

Մեր օրերում, երբ իր դարն ապրած, մեռնող կապիտալիզմը թավալգլոր գնում է դեպի անկում, երբ բոլոր ճանապարհները տանում են դեպի կոմունիզմ, Մեծ Ստալինի պայծառ կրակով վառվող Սովետական Միության մարգարիտ Անդրկովկասը, որպես մի մեծ ջահ, որպես փարոս լուսավորում է անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ճիրաններում տառապող Արևելքի ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին։